Մամլո Հաղորդագրություն
Հետադարձ կապ- Դիանա Մանուկյան
Էլ. փոստ- diana@aua.am

21 ապրիլի 2012 թ.

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԳԵՏ ՋԵՖՐԻ ՌՈԲԵՐՏՍՈՆԸ ԵԼՈՒՅԹ ԿՈՒՆԵՆԱ ՀԱՀ-ՈՒՄ

ԵՐԵՎԱՆ. Երեքշաբթի օրը՝ ապրիլի 23-ին, Հայաստանի ամերիկյան համալսարանը (ՀԱՀ) կհյուրընկալի մարդու իրավունքների պաշպանության ոլորտում միջազգային իրավագետՋեֆրի Ռոբերտսոնին: Իրայցի ընթացքում Ռոբերտսոնը հանդես կգա «Իրավական հայացք ցեղասպանությանը. ինչպես են գլոբալ տեղեկատվությունը և թափանցիկությունը իրավասություններ տալիս օրենքին համընդհանուր արդարությանը հետամուտ լինելու հարցում» խորագրով միջոցառմանը՝ «Ինչու են Հայոց ցեղասպանությունը հերքողները սխալվում» դասախոսությամբ :

Ռոբերտսոնի դասախոսությունը, որը բաց է հանրությանը, տեղի կունենա ՀԱՀ-ի Փարամազ Աւեդիսեան մասնաշենքի Մանուգեան դահլիճում ժամը 17:30-ին: Ելույթը ուղիղ կհեռարձակվի webcam.aua.am կայքում:

Դասախոսությունը «Լույս հիմնադրամի» հետ համատեղ կազմակերպվող «Բացեք Ձեր միտքը» խորագրով դասախոսությունների շարքից թվով երրորդն է: Դրան կհետևի բանավեճ, որը կվարի ՀԱՀ-ի Իրավագիտության ֆակուլտետի դեկան Թոմաս Սամուելյանը: Քննարկումների ընթացքում Ռոբերտոսնին կմիանան նաև Հայաստանի Հանրապետության Արդարադատության փոխնախարար Եղիշե Կիրակոսյանը և Հայաստանի Ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն Հայկ Դեմոյանը::

Կեսօրին Ռոբերտսոնը թանգարանում Հայկ Դեմոյանի հետ համատեղ մամլո ասուլիս կհրավիրի: Դեմոյանը Հայոց ցեղասպանության հարցի շուրջ կատարած իրավական վերլուծության համար Ջեֆրի Ռոբերտսոնին կպարգևատրի «Ֆրիտյոֆ Նանսենի» պատվո շքանշանով: Այնուհետև Դեմոյանը թ Ռոբերտսոնի և ՀԱՀ նախագահ Բրյուս Պողոսյանի հետ թանգարանում էքսկուրս կկատարի, ինչից հետո նրանք ծաղկեպսակ կդնեն Ցեղասպանության հուշահամալիրում:

Ռոբերտսոնը հանդիսանում է «Մարդկության դեմ հանցագործություններ. պայքար համընդհանուր արդարության համար » գրքի հեղինակը, որը վերլուծում է մարդու իրավունքների միջազգային նորմերի կիրառումն ու զարգացումը և սկսվում է Հիտլերի՝ Հայոց ցեղասպանությունը մոռացված իրողություն որակող մեջբերմամբ:

2008 թվականին Լոնդոնում Հայկական կենտրոնը դիմել է Ռոբերտսոնի ծառայությանը՝ պարզաբանելու՝ արդյոք թուրքերի կողմից իրականացված 1915 թվականի հայերի տեղահանումներն ու ջարդերը միջազգային օրենքի չափանիշներով կարող են որակվել որպես ցեղասպանություն: Միացյալ Թագավորությունը, ինչպես Միացյալ Նահանգները, դեռևս հրաժարվում է պաշտոնապես ճանաչել Հայոց ցեղասպանությունը:

Հաշվի առնելով ջարդերի և կոտորածների մեծածավալ ապացույցները և 1948 թվականին Միացյալ ազգերի՝ Ցեղասպանության մասին կոնվենցիայի հետ դրա անմիջական առնչությունը, Ռոբերտսոնը եզրակացրել է. «Իմ կարծիքով, երբ օրենքը համադրվում է փաստերի հետ, դա անխուսափելի եզրահանգման է բերում, որ 1915 թվականի հայերի

հանդեպ ցուցաբերած վերաբերմունքը համապատասխանում է ցեղասպանություն նկարագրությանը»:

Հիմնվելով Ազատության մասին օրենքով ձեռքբերված կառավարական գաղտնի քաղաքականության փաստաթղթերի և հուշագրերի վրա , Ռոբերտսոնը հայտարարել է, որ Բրիտանական կառավարության՝ «ապացույցները միանշանակ չեն համոզում եղելությունը ցեղասպանություն որակելու համար» պնդումըկեղծ է: Ըստ Ռոբերտսոնի, կառավարությունը երբեք նմանատիպ որակում չէր իրականացրել:

Իր «Եղե՞լ է արդյոք Հայոց ցեղասպանություն» 41 էջանոց զեկույցում Ռոբերտսոնը պնդում է, որ Արտաքին գործերի և համագործակցության հարցերով զբաղվող գրասենյակի (ԱԳՀՀԶԳ)՝ կառավարության նախարարներին տրված խորհուրդը «նպատակ ուներ մոլորեցնել խորհրդարանին՝ ստիպելով հավատալ, որ իրականացվել է ապացույցների գնահատում և դատողություն՝հիմնված այդ ապացույցների վրա»:

«Խորհրդարանը»,- հայտարարել է նա, - « պարբերաբար ապատեղեկացվել է»:

Ռոբերտսոնը մեղադրելմ է ԱԳՀՀԶԳ -ին «Ցեղասպանության ժխտման»ը ներգրավվելու մեջ , քանի որ « Հայոց ցեղասպանության ճանաչումը հարված կհասցնի Թուրքիայի հետ հարաբերություններին՝ առանց բրիտանական որևէ տնտեսական կամ դիվանագիտական շահերի հատուցման առավելության »:

Ռոբերտսոնի մեջբերած 1999 թվականի ապրիլի ԱԳՀՀԶԳ –ի հուշագրում նշվում է. «Հաշվի առնելով Թուրքիայի հետ ունեցած մեր հարաբերությունների կարևորությունը (քաղաքական, ռազմավարական և առևտրային) և այն փաստը, որ Միացյալ Թագավորությունը ոչինչ չի շահի՝ ցեղասպանություն փաստը ընդունելով,... ներկայիս ռազմավարությունը միակ ընդունելի տարբերակն է»: Փաստաթղթի հեղինակը ընդունում է, որ այդ քաղաքականությունը կառավարությանը «էթիկայի տեսակետից խիստ քննադատական կարգավիճակում է թողնում» :

Ռոբերտսոնը հաստատում է, որ այդ իրադարձությունների բրիտանական կառավարության ներկայիս որակումը որպես ոչ ավել, քան «ողբերգություն», կապշեցներ «Նորին Մեծության կառավարության» առաջնորդներին 1915 թվականին և հետպատերազմյան խաղաղության համաժողովների ժամանակ , որոնք դրանքդիտարկում էին որպես «հիմնարար հանցագործություն, այլ ոչ՝ ողբերգություն»:

Ռոբերթսոնը Սիերա Լեոնեի Միացյալ ազգերի պատերազմական հանցանքների դատարանի առաջին նախագահն է եղել և «Ամնեստի Ինթերնեյշնլի» (Amnesty International) կազմակերպության անունից մասնակցել է մարդու իրավունքների պաշտպանության բազմաթիվ առաքելությունների : Որպես Լոնդոնում Դոթի Սթրիթ Պալատների հիմնադիր և ղեկավար, Ռոբերտսոնը ներկա է գտնվել միջազգային տարբեր ատյաններում տեղի ունեցող դատական լսումներում, այդ թվում նաև Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի լսումներում: 2008 թվականինԳլխավոր քարտուղարի կողմից նա նշանակվել է որպես Միավորված ազգերի Ներքին Արդարադատության խորհրդի անդամ:

Շուրջ քսան տարի առաջ, Ռոբերտսոնը հաջողությամբ պաշտպանել է հեղինակ Սալման Ռուշդիին, երբ բրիտանական մահմեդականները հայց էին ներկայացրել նրա դեմ, որում արձանագրվում էին «Սատանայական քառյակի» տպագրությունից հետո տեղի տված

վիրավորական զրպարտությունները: Ռոբերտսոնը թաքցրել է նաև Ռուշդիին իր տանը այն բանից հետո, երբ Իրանի նախագահ Այաթոլլահ Խոմեյնին Ռուշդիի սպանության կոչ էր արել:

Այսօր Ռոբերտսոնը, ունենալով Բրիտանիայի և Ավստրալիայի երկքաղաքացիություն,ս ներկայացնում է և՛ ականավոր, և՛ վիճահարուցային հայցվորի. այժմ նա հանդիսանում է Վիկիլիկսի գլխավոր խմբագիր ավստրալացի Ջուլիան Ասանժի գլխավոր խորհրդատուն:

Հայաստանի ամերիկյան համալսարանը (ՀԱՀ) մասնավոր, ոչ կրոնական անկախ համալսարան է՝ տեղակայված Երևանում՝ Հայաստանում: Հիմնադրվելով 1991 թվականին՝ ՀԱՀ-ն հանդիսանում է Կալիֆորնիայի համալսարանի մասնաճյուղը և այն հավատարմագրված է Դպրոցների և քոլեջների արևմտյան ասոցիացիայի կողմից: Ուսուցման, հետազոտության և հանրային ծառայությունների միջոցով ՀԱՀ-ն ծառայում է Հայաստանին և տարածաշրջանին՝ մատակարարելով բարձրորակ կրթություն յոթ տարբեր խոշոր բնագավառներում՝ խրախուսելով քաղաքացիական ներգավվածություն և խթանելով ժողովրդավարական արժեքներ:

###